ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2017 թվականի N 43-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի հունվարի 17-ի N 1-Ա որոշման հավելվածի 6.2.1 կետի պահանջները՝ ***որոշում եմ՝***

1. 2017 թվականի մարտի 24-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի ղեկավարությամբ անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝ <<Ջրածածկման տարածքում որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում և իրականացում>> թեմայով:

2. Նշանակել ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ փրկարար ծառայության գնդապետ՝ Ա.Մանուկյանին:

3. Ուսումնավարժությանն ընդգրկել՝
   1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ուժերը,
   2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի մեկ հաշվարկ,
   3) <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության շտապ բուժօգնության ծառայության գծային բրիգադը,
   4) <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության <<Գեղամա>> մասնաճյուղի Հրազդանի տեղամաս,
   5) <<ԳազՊրոմԱրմենիա>> փակ բաժնետիրական ընկերության Կոտայքի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղի Հրազդանի վթարավերականգնողական մեկ բրիգադ,

4.Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության օրացուցային պլանը՝ համաձայն N 1 հավելվածի,
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի,
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 3 հավելվածի,
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության մտահղացման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի:

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝
   1) կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն օրացուցային պլանի.
   2) մինչև 2017 թվականի մարտի 20-ը զեկուցել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին,
   3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:
5. Ուսումնավարժության մասնակիցներին՝
   1) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով.
   2) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.
   3) ուսումնավարժության անցկացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները.
   4) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:
6. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի մարտի 16
ք.Հրազդան